ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

21 փետրվարի 2014թ. թիվ 137-Ա

ՀՐԱՄԱՆ

<ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԳՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 472-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 21-րդ կետի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել <Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների ուսումնասիրման ծառայության արժեքի ձևավորման մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:

2. <Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից յուրաքանչյուր ապրանքախմբի կողմնորոշիչ գնի տրամադրման ծառայության արժեքը սահմանել 17200 դրամ /ներառյալ հարկերը/:

ՆԱԽԱՐԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՖՆ 000467

Հավելված

ՀՀ ֆինանսների նախարարի ,--21--,--փետրվարի---------- 2014թ

N 137-Ա հրամանի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

<ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԳՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն մեթոդաբանությամբ սահմանվում են <Գնագոյացման վերլուծության ինֆորմացիոն կենտրոն> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից հրապարակվող <Ինֆորմացիոն տեղեկագրում> չընդգրկված, սակայն սահմանված կարգով կազմակերպություն ներկայացված դիմումների հիման վրա պետական կարիքների համար շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների ուսումնասիրման, հաշվարկման, վերլուծության և կազմակերպության կողմից այդ նյութերի գների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայության արժեքի ձևավորման ընթացակարգը:

II. Նոր ապրանքների գների ուսումնասիրման հիմանական փուլերը

2. Նոր ապրանքատեսակների (այսուհետ նյութեր) կողմնորոշիչ գների ուսումնասիրման, հաշվարկման և գների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կազմակերպումը և իրականացումը կազմված է հետևյալ փուլերից

1) ուսումնասիրման ենթակա նյութերի տեխնիկական բնութագրերի հստակեցում,
2) նյութերի նույնականացման չափանիշների ձևավորում,
3) նյութերի գների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող ընկերությունների շրջանակի սահմանում,
4) նյութերի գների հավաքագրում և տրամադրում:

3. Կազմակերպությանն ուղղված դիմումում նշված նյութերի տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ծագման երկրների և այլ էական հատկանիշները պետք է հստակ ձևակերպված լինի դիմողի կողմից և համապատասխանեն տվյալ նյութի նորմատիվատեխնիկական փաստաթղթերին և այլ բնորոշիչ հատկանիշներին:

4. Նույնական են համարվում այն նյութերը, որոնք ունեն միևնույն տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանը և ծագման երկիրը: Նույնական նյութերը ընդգրկվում են միևնույն ապրանքախմբի մեջ:

5. Կազմակերպության կողմից նյութի գինը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2013թ. ապրիլի 25-ի <Պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգը հաստատելու մասին> թիվ 472 որոշմամբ հաստատված կարգի դրույթներին համապատասխան:

6. Կազմակերպության կողմից պատվիրատուին չի տրամադրվում նյութի գնի ստացման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը:

III. Կազմակերպության կողմից նյութերի գների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ժամկետները

7. Կազմակերպության կողմից նյութերի գների մասին տեղեկատվությունը տրամադրվում է դիմողին համապատասխան պայմանագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ նյութերի գների մասին տեղեկատվությունը կազմակերպության կողմից կարող է տրամադրվել պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, որի պայմաններում ծառայության արժեքն ավելացվում է 50 տոկոսի չափով:

IV. Կազմակերպության կողմից նյութերի գների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայության արժեքի հաշվարկը

9. Կազմակերպության կողմից նյութերի գների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայության (այսուհետ՝ ծառայություն) արժեքը հաշվարկելու համար հիմք է վերցվել

1) ծառայության մատուցմանը մասնակցող աշխատակիցների թվաքանակը,

2) միավոր աշխատանքի վրա ծախսած ժամանակը,

3) ծառայության համար ծախսվող նյութական ռեսուրսները,

4) շահույթը և հարկերը:

10. Ծառայության մատուցմանը մասնակցող աշխատակիցների թվաքանակը սահմանվում է որպես ծառայության մատուցմանն անմիջականորեն մասնակցող և պատասխանատու աշխատակիցների (այսուհետ՝ ծառայություն մատուցող աշխատակիցներ) ընդհանուր քանակ:

11. Միավոր աշխատանք է համարվում ծառայություն մատուցող աշխատակիցների կողմից մեկ ապրանքախմբում ընդգրկված նյութերի գների ուսումնասիրումը, հաշվարկումը, վերլուծությունը և սահմանումը:

12. Միավոր աշխատանքի վրա ծախսած ժամանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՄԱ = \frac{ԱԱՖ}{Ա \times ՄԺ} \times Ժ$$

որտեղ՝

ՄԱ-ն միավոր աշխատանքի վրա ծախսած ժամանակն է,

ԱԱՖ-ն ծառայություն մատուցող աշխատակիցների աշխատավարձի տարեկան ֆոնդն է,

Ա-ն ծառայություն մատուցող աշխատակիցների թվաքանակն է,

ՄԺ-ն յուրաքանչյուր աշխատակցի տարեկան հաշվարկված փաստացի աշխատանքային մարդ-ժամերի քանակն է,

Ժ-ն ծառայության մատուցման համար նախատեսված աշխատաժամանակն է:

13. Յուրաքանչյուր ապրանքախմբի նյութերի գների ուսումնասիրության համար կատարվող այլ ծախսերի (ներառյալ ծախսվող նյութական ռեսուրսների) արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱԾ = \frac{(ԸՌՖ/ԿԱ) \times Ա}{ԻՏԽ}$$

որտեղ՝

ԱԾ-ն այլ ծախսերն են,

ՆՌՖ-ն կազմակերպության այլ ծախսերի ամսական ֆոնդն է (համաձայն տվյալ տարվա համար հաստատված նախահաշվի)՝ որտեղ ներառված են բոլոր ծախսերը, բացի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ միջոցների ամսական ֆոնդը,

ԿԱ-ն կազմակերպության ընդհանուր աշխատակիցների թվաքանակն է,

Ա-ն ծառայություն մատուցող աշխատակիցների թվաքանակն է,

ԻՏԽ-ն կազմակերպության կողմից հրապարակվող <Ինֆորմացիոն տեղեկագրում> ընդգրկված ապրանքախմբերի քանակն է:

14. Ծառայության մատուցման ինքնարժեքը կազմում է միավոր աշխատանքի վրա ծախսած ժամանակի արժեքի և այլ ծախսերի հանրագումարը

ԾԻ = ՄԱ + ԱԾ

որտեղ՝

ԾԻ-ն ծառայության մատուցման ինքնարժեքն է,

ՄԱ-ն միավոր աշխատանքի վրա ծախսած ժամանակի արժեքն է,

ԱԾ-ն այլ ծախսերն են:

15. Ծառայության մատուցման ընդհանուր արժեքը կազմում է ծառայության ինքնարժեքի, շահույթի (նախատեսվում է 5 տոկոսի չափով) և նախատեսված հարկերի (20 տոկոս) հանրագումարը:

16. Կախված ապրանքախմբում ընդգրկված նյութերի քանակից ծառայության արժեքը ենթակա է ավելացման՝ հետևյալ կարգով.

Եթե ապրանքախմբում ընդգրկված են՝

1-5 նյութեր, ապա	- 0%-ով
5-10 նյութեր	- 10%-ով
10-30 նյութեր	- 25%-ով
30-ից ավել նյութեր	- 50%-ով: